ԿԱՐԾԻՔ

Նորայր Արտաշի Ավագյանի «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների չափորոշիչները» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերաբերյալ

ք. Երևան

20 հունիսի 2023 թվական

Նորայր Արտաշի Ավագյանի «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների չափորոշիչները» վերտառությամբ ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսությունը նվիրված է առանձին տեսակի վարչական վարույթների համալիր հետազոտությանը:

Հեղինակի կողմից համալիր ուսումնասիրության առարկա են դարձել վարչական վարույթի և, մասնավորապես, առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների սահմանադրահիրավական ու միջազգային իրավական հիմքերը, ներպետական օրենսդրական զարգացումները, այդ առանձնահատկությունները պայմանավորող գործոնները, վարչական վարույթի առանձին տեսակների դասակարգման ու դրանց բնույթի բացահայտման չափորոշիչները:

Ընտրված թեման և դրա շրջանակում առանձնացված հարցադրումները՝ ինչպես տեսական, այնպես էլ իրավաստեղծ և իրավակիրառ առումով, արդիական են, ինչի առնչությամբ հեղինակը շարադրել է որոշակի հիմնավորումներ:

Այսպես, հեղինակը ի թիվս այլնի, թեմայի արդիականությունը դիտարկել է նշված հարցադրումների առնչությամբ մեկ ընդհանուր հայեցակարգի բացակայության տեսանկյունից և նշել. «... վարչարարություն իրականացնող մարմինների գործունեության արդունավետությունը և այդ գործընթացում անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը բավականին մեծ ուշադրության են արժանի, ուստին առանձին տեսակի վարչական վարույթների և դրանց առանձնահատկությունների իրավասահմանման (իրավաստեղծ) ու իրավակիրառ գործընթացները անհրաժեշտ է, որ իրականացվեն ընդհանուր հայեցակարգի հիման վրա...» - էջ 5:

Կարծում ենք, հեղինակը համոզիչ փաստարկներով հիմնավորել է առնվազն երկու առանցքային հայեցակետ՝ ա) վարչարարության համատեքստում մարդու իրավունքների իրացման արդյունավետությունը թելադրված է նաև վարչարարության առանձնահատկությունների շրջանակով և բովանդակությամբ և բ) առանձնահատկությունները կարող են նպատակահարմար, արդյունավետ և իրավաչափ համարվել, եթե դրանց հիմքում գործում է միասնական հայեցակարգ:

Աշխատանքը պատրաստված է գիտական անհրաժեշտ բարեխղճությամբ, այն ինքնուրույն հետազոտության արդյունք է, չկան այլոց մտքերն ու դատողությունները յուրացնելու փաստեր, նյութը շարադրված է հստակ գիտական ու տարբնթերցումների տեղիք չտվող լեզվառճով: Այլ գիտնականների տեսակետերը վերլուծելիս, այդ թվում՝ դրանց հետ չհամաձայնվելու դեպքերում, հեղինակը դրսևորել է հասուն գիտական բարեխղճություն:

Աշխատանքը ձևավորված է համապատասխան պահանջների պահպանմամբ, իսկ վրիպակներն ու խմբագրական այլ թերությունները գրեթե բացակայում են:

Ընդհանուր առմամբ ապահովված է պաշտպանության ներկայացվող դրույթների ինքնատիպությունն ու ներքին համակարգային կապը: Դրանք կարող են

հիմնարար նշանակություն ունենալ առանձին տեսակի վարչական վարույթներին առնչվող տեսական հիմքերի, իրավաստեղծ ոլորտի և իրավակիրառման բարելավման համար:

Հետազոտության համար ընտրվել են հիմնականում անհրաժեշտ ծավալի և շրջանակի գրականության աղբյուրներ, նորմատիվ փաստաթղթեր, իրավակիրառ և դատական պրակտիկայի նյութեր ու այլ իրավական փաստաթղթեր:

Աշխատության կառուցվածքի առնչությամբ, գտնում ենք, որ հեղինակն ընտրել է հիմնավորված ու տրամաբանական կառուցվածք: Վերջինս հնարավորություն է տվել նախ, անդրադառնալու վարչական վարույթին ու վարչարարությանն առնչվող առավել ընդհանրական հարցադրումների, որից հետո միայն առավել նեղ ու կոնկրետ հարցադրումների և վերլուծության արդյունքներով դրանց վերաբերյալ կատարելու սեփական եզրահանգումներն ու առաջարկությունները: Թերևս, նշված կառուցվածքն ընտրելիս, հեղինակը գործել է հիպոթետիկ-դեդուկտիվ մեթոդաբանությամբ, քանզի ոչ միայն բխեցրել է եզրահանգումներ, այլև փորձել է դրանք ներկայացնել որոշակի հանդիպակաց ստուգումներով:

Հեղինակը արձանագրել է քննարկվող ոլորտներում առկա իրավակարգավորումների որոշ խնդիրները, դրանց առնչվող իրավական հարցադրումները ուսումնասիրության առարկա է դարձրել առկա իրավակարգավորումների կատարելագործման համատեքստում՝ միջազգային չափանիշների հաշվառմամբ և ըստ այդմ՝ բանաձևել է դրանց վերաբերյալ սեփական դիտանկյունից ընդունելի համարժեք լուծումները:

Համեմատական իրավական վերլուծության արդյունքում առաջադրվում է այն ելակետային ճիշտ մոտեցումը, որ. «...բոլոր այն ընթացակարգերում, որոնք եզրափակում են անձանց իրավունքների, ազատությունների կամ օրինական շահերի նկատմամբ ազդեցություն ունեցող անհատական միջոցների օգտագործմամբ կամ որոշման ընդունմամբ, պետք է գործընթացում երաշխավորվի լավ և արդյունավետ կառավարման նպատակներից բխող հիմնարար սկզբունքների իրացումը» /էջ – 18/:

Ուշադրության է արժանի հեղինակի համակարգված ու հետևողական մոտեցումը թեմային առնչվող հիմնահարցերի բացահայտմանը՝ ոչ միայն գիտատեսական, այլև միջազգային իրավական ու արդարադատական պրակտիկայից ելնելով, ներպետական սահմանադրահիրավական համակարգի ընդհանարական գնահատման տեսանկյունից:

Հետևողականություն է դրսևորվում նաև վարչական վարույթների դիտարկմանը որպես համակարգ, իսկ վարչարարության հիմնարար սկզբունքները ներկայացվում են որպես հատկանիշների ամբողջականություն, որոնք միավորում են առանձին տեսակի վարչական վարույթները /տե՛ս, մասնավորապես, էջ 34/:

Միաժամանակ, հեղինակը արձանագրում է ելակետային այն սկզբունքային մոտեցումը, որ տվյալ ոլորտի իրավակարգավորումների հիմքում «...պետք է դրված լինեն արդյունավետության և անձի իրավական պաշտպանության սկզբունքները՝ վերջիններիս իրացումը երաշխավորելով համապատասխան կառուցակարգերով ու ընթացակարգերով» /էջ – 64/: Ճիշտ է կարծում ատենախոսության հեղինակը, որ առաջնահերթություն տալով վարչական մարմինների արդյունավետ աշխատանքին և այդ գործընթացում չապահովել անձանց իրավունքների ու ազատությունների իրացման կառուցակարգեր, նշանակում է իրականացնել անարդյունավետ կառավարում – էջ 67:

Կարևորում ենք նաև այն հանգամանքի արձանագրումը, որ Սահմանադրությամբ պատշաճ վարչարարության իրավունքի ամրագրումը որպես անձանց հիմնարար իրավունքներից մեկի, մի կողմից՝ հանրային իրավահարաբերություններում հանդիսանում է մարդու իրավունքների ու ազատությունների ապահովման երաշխիք, մյուս կողմից՝ այն հանրային իշխանության սահմանափակվածության, կաշկանդվածության չափորոշիչ է /էջ – 107/:

Առանձին տեսակի վարույթների իրավական բովանդակության բացահայտումը հեղինակին հնարավորություն է տվել իրավական համակարգի համալիր բարեփոխումների վերաբերյալ արժեքավոր մոտեցումներ առաջադրել /մասնավորապես տե՛ս ատենախոսության 115-122 էջերը/:

Ատենախոսությունը, ընդհանուր առմամբ, դրական ենք գնահատում որպես արդիական թեմայի համալիր, հետևողական, գիտական պատշաճ խորությամբ հետազոտություն:

Սակայն, այն զերծ չէ որոշ թերություններից, որոնց առնչությամբ կցանկանայինք ներկայացնել հատկապես հետևյալ նկատառումները.

1) Աշխատանքը վերնագրված է. «Առանձին տեսակի վարչական վարույթների **առանձնահատկությունների չափորոշիչները**»: Նման ձևակերպումից հետևում է, որ առանցքային նշանակություն պետք է տրվեր հենց առանձին տեսակի վարչական վարույթների **առանձնահատկությունների չափորոշիչներին**: Այդ չափորոշիչների բնույթի, բովանդակության, համակարգային ամբողջականության բացահայտումն ու համարժեք գիտական եզրահանգումների ներկայացումը պետք է կազմեր աշխատանքի գիտական նորույթի հիմնական բովանդակությունը: Մինչդեռ գլխավոր շեշտը դրվում է առանձին տեսակի վարչական վարույթների իրավական բովանդակության ընդհանարական բացահայտման ու դրանց առանձնահատկությունների վրա:

2) Հեղինակը աշխատության «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների իրավական հիմքերն ու ներպետական օրենսդրության էվոլյուցիան» վերտառությամբ առաջին գլխում միջազգային իրավական հիմքերի համատեքստում անդրադարձել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի բանաձևերին ու հանձնարարականներին: Աշխատությունն առավել կշահեր, եթե առավել խորը և մանրամասն անդրադարձ կատարվեր այդ փաստաթղթերի իրավական նշանակությանը, հատկապես՝ որպես առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների չափորոշիչների գործառույթ իրականացնելու համատեքստում, ինչպես նաև փորձ արվեր համակարգված բացահայտել այդ կարևո-

բազույն փաստաթղթերը, ըստ էության, ոչ պատշաճ իմպլեմենտացիայի ենթարկելու պատճառները և առաջադրեր այդ մտահոգող խնդիրները հաղթահարելու ուղիները:

Ինչ խոսք, գիտական հետազոտության առաջնահերթ նպատակներից է նաև միջազգային իրավական փաստաթղթերի համակողմանի վերլուծությունը և դրա արդյունքում ազգային իրավաստեղծ գործունեությունն ու դատական պրակտիկան բալելավելուն միտված դատողություններ առաջադրելը, սակայն, վերջին հաշվով, գիտականության առավել խորքային ու պահանջված առաքելությունը հիշյալ անհամապատասխանությունները հաղթահարելու ընդհանուր մեթոդաբանության բացահայտումն է:

3) Աշխատության առաջին գլխի «Վարչական վարույթի և առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների սահմանադրական և միջազգային իրավական հիմքերը» վերտառությամբ առաջին պարագրաֆում հեղինակը վարչարարության հիմնարար սկզբունքները ներկայացրել է առանձին տեսակի վարչական վարույթների համակարգում որպես համակարգաստեղծ գործառույթ իրականացնող կապեր, սակայն բավարար չափով հստակ և համապարփակ չի ներկայացրել այդ համակարգի նշանակությունը, այլ կերպ, թե ո՞րն է այդ համակարգի՝ որպես բոլոր տեսակի վարչական վարույթների միասնության, ամբողջության մեջ ընկալելու և ներկայացնելու նշանակությունն ու գիտագործնական անհրաժեշտությունը: Այս դիտարկումը պարզապես անմիջականորեն առնչվում է արժեբանական մեթոդաբանությամբ հեղինակի առաջարկությունների առանձին ասպեկտների էության բացահայտմանը և վերաբերում է այն կարևորագույն հարցադրմանը, ըստ որի՝ հարկ էր երաշխավորել հետազոտության համալիրությունը՝ հեղինակի եզրահանգումների ներքին տրամաբանական կապի հենքով: Ընդ որում, ինչպես արդեն նկատեցինք, հեղինակն ինքն է ընդգծել կոնկրետ վարույթների առանձնահատկությունների հիմնավորվածությունը ապահովելու տեսանկյունից հնարավորինս միասնական հայեցակարգ ունենալու անհրաժեշտությունը, ինչին գիտական

հետազոտության հարթությամբ հնարավոր է հասնել միայն անհրաժեշտ համակարգային և համալիր մոտեցումների պարագայում:

4) Պաշտպանության ներկայացված 4-րդ և 5-րդ դրույթների առնչությամբ աշխատության մեջ բավարար չափով անդրադարձ չի կատարվել դրանց տարանջատմանն ու հարաբերակցությանը, ինչը ոչ միայն կնպաստեր դրանց առավել հստակ ընկալմանը, այն նաև առավել կընդգծեր դրանցից յուրաքանչյուրի՝ որպես պաշտպանության ներկայացված դրույթի ինքնատիպությունը: Աշխատանքում կա որոշակի առանձնացված նյութ՝ դրանց տարանջատման կտրվածքով, սակայն արդեն իսկ մշակված նյութը, կարծում ենք, բավարար չափով համարժեք արտացոլված չէ նշված դրույթներում, ինչն էլ մասամբ խնդրահարույց է դարձրել դրանք տարանջատելու և միմյանց փոխհարաբերության սահմանները հստակեցնելու խնդիրը:

5) Աշխատության «Վարչական վարույթի առանձին տեսակների դասակարգման և իրավականության հիմնահարցերը» երրորդ գլխի առաջին՝ «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների մեթոդաբանական հիմնախնդիրները» վերտառությամբ պարագրաֆում հեղինակը, անդրադառնալով ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթին, նշել է հետևյալը. «... կարծում ենք, որ հանրային շահ հետապնդող այս գործընթացի առնչությամբ առաջացող հարաբերությունները օրենսդրի կողմից մեխանիկորեն մասնավոր իրավունքի բնագավառին դասելը և/կամ դրանց առնչությամբ ծագող վեճերը ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը հանձնելը կրում է արհեստական, «ֆիկտիվ» բնույթ: Հետևաբար, գտնում ենք, որ այդպիսի իրավահարաբերությունները, որոնք ըստ էության հանդիսանում են հանրային, սակայն օրենսդրի կողմից մեխանիկորեն դասակարգվում են մասնավոր իրավունքի բնագավառին, հանդիսանում են «ֆիկտիվ» մասնավոր իրավահարաբերություններ, որոնց առկայությունը իրավական համակարգում, կարծում ենք, խնդիրներ ունի սահմանադրականության հետ, մասնա-

վորապես, Սահմանադրության 61-րդ և 75-րդ հոդվածներով սահմանված հիմնական իրավունքների հետ ...» /էջ – 106/:

Ընդհանուր առմամբ հեղինակը կարողացել է առաջադրել առնչվող հիմնավորումներ այս եզրահանգման առումով, սակայն առավել նպատակահարմար կլիներ, եթե այն քննարկվեր նաև պետության կողմից իր հանրային իշխանական լիազորությունները մասնավոր անձանց փոխանցելու միջոցով իրականացնելու կառուցակարգի համատեքստում, ինչպես նաև անդրադառնար այն խնդրին, թե որքանով է իրավաչափ և արդյունավետ՝ պետության կողմից իր լիազորությունների պատվիրակման նշված կառուցակարգը:

Վերը նշված նկատառումներով հանդերձ, անհրաժեշտ ենք համարում նշել, որ դրանք հիմնականում աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությունից են բխում և չեն ստվերում կատարված աշխատանքի որակն ու գիտական արժեքը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հրատարակած 9 գիտական հոդվածներում, որոնցից 7-ը՝ ՀՀ ԲՈԿ-ի կողմից ընդունելի գիտական հանդեսներում:

Ամփոփելով հիշյալ ատենախոսության վերաբերյալ դիտարկումներն ու նկատառումները, գտնում ենք, որ հեղինակը կատարել է ծավալուն և արդյունավետ աշխատանք, այն աչքի է ընկնում ինքնուրույնությամբ և պահանջվող աստիճանի ինքնատիպությամբ: Հեղինակի աշխատությունը պատրաստված է ատենախոսության ձևավորման պահանջներին համապատասխան:

Այսպիսով, Նորայր Արտաշի Ավագյանի «Առանձին տեսակի վարչական վարույթների առանձնահատկությունների չափորոշիչները» վերտառությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու ատենախոսության վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ այն համապատասխանում է Կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի N 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով սահմանված ատենախոսու-

թյանը ներկայացվող պահանջներին: Հեղինակը ցուցաբերել է գիտահետազոտական-վերլուծական անհրաժեշտ ընդունակություններ, կատարել է բազմակողմանի հետազոտություն, ներկայացրել է պատշաճ մակարդակով գրված, տեսական ու գործնական զգալի նշանակություն ունեցող աշխատանք, որի համար կարող է շնորհվել ԺԲ.00.02 - «Հանրային իրավունք – սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
ԳԱԳԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

20 հունիսի 2023 թվական

Պաշտոնական ընդդիմախոս, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Հարությունյանի ստորագրությունը հաստատում եմ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ
ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԽԱՉԻԿՅԱՆ

20 հունիսի 2023 թվական